*Հավելված 3*
*«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/14» ծածկագրով*
*ընթացակարգի հրավերի*
*«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին*

**Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**
**Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման պահանջներին համապատասխանության մասին**

-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------ն հայտնում և հավաստում է, որ
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

ունի պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

------------------------------------------------------------------------------------------------------ ------------------------------------------------
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

«______» ______________ 20___թ.
(ամսաթիվը, ամիսը)

*Հավելված 4*
*«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/14» ծածկագրով*
*ընթացակարգի հրավերի*
*«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին*

## ՏՈւԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈւԹՅՈւՆ ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/14

ք. Երևան «____» ____________ 20___թ.

____________________________-ն, ի դեմս Ընկերության ____________________-ի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

### *1. Համաձայնության առարկան*

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է «Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Կենտրոն) կողմից կազմակերպված՝ «Թարգմանության ծառայությունների ձեռքբերման» ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/14 ծածկագրով ընթացակարգին, պետք է ներկայացնի ընթացակարգի հայտի ապահովում և ընթացակարգին մասնակցելուց բխող պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը սահմանում է իր հետևյալ պատասխանատվությունը.

1.1.1 Կենտրոնի կողմից կազմակերպված «Թարգմանության ծառայությունների ձեռքբերման» ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/14 ծածկագրով ընթացակարգին Ընկերության մասնակցելուց բխող՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և ընթացակարգի հրավերով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Ընկերությունը Կենտրոնին վճարում է տուժանք՝ 1000000 (մեկ միլիոն) ՀՀ դրամի չափով:

1.1.2 Կենտրոնն իրավունք ունի Ընկերության կողմից սույն համաձայնության 1.1.1 կետում նշված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում նշված գումարի գանձման պահանջ ներկայացնել Ընկերությանը, որն Ընկերությունը անվերապահորեն կկատարի նման պահանջ ստանալու օրվանից 5 բանկային օրվա ընթացքում:

1.1.3 Ընկերությունն իրավունք է վերապահում Կենտրոնին, առանց նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով գանձել համապատասխան գումար, սույն համաձայնության 1.1.1 կետում նշված գումարի սահմաններում, Ընկերությանը սպասարկող ____________________ բանկում կամ Ընկերությանը սպասարկող ցանկացած այլ բանկում բացված՝ Ընկերության ցանկացած հաշվից: Սույնով ____________________-ն հանձնարարում է ____________________ բանկին, ինչպես նաև իրեն սպասարկող բոլոր բանկերին, սույն համաձայնության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում «Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով տուժանքի մասին սույն համաձայնության հիման վրա Ընկերության բանկային հաշիվներից անակցեպտ (անվիճելի) կարգով գանձել պահանջվող գումարը:

## *2. Այլ պայմաններ*

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է Կենտրոնի կողմից ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/14 ծածկագրով կազմակերպված ընթացակարգի հրավերի վավերականության ընթացքում:

2.2 Սույն համաձայնությունը չի կարող վաղաժամկետ դադարել, Ընկերության կողմից հետ կանչվել, փոփոխվել կամ այլ կերպ դադարել առանց Կենտրոնի գրավոր համաձայնության:

2.3 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

*Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները*

----------------------------------------------------------------------------------------------------------------------------,
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

----------------------------------------------------------------------------------------------------------------------------,
(հասցեն)

----------------------------------------------------------------------------------------------------------------------------,
(բանկ)

*Հ/Հ* --------------------------------------------------------------------------------

*ՀՎՀՀ* --------------------------------------------------------------------------

----------------------------------------------------------------------------------------------------------------------------,
(Ընթացակարգի մասնակցի ղեկավարի պաշտոնը, անուն, ազգանուն)

----------------------------------------------------------------------------------------------------------------------------,
(ստորագրություն)

----------------------------------------------------------------------------------------------------------------------------,
(Ընթացակարգի մասնակցի գլխավոր հաշվապահի (հաշվապահի), անուն, ազգանուն)

----------------------------------------------------------------------------------------------------------------------------,
(ստորագրություն)

*Կ.Տ.*